ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 09.08.2019թ.

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի
թիվ ՍՑ-ՆԳ-2019/119

Հայաստանի Հանրապետության գնումների հետ կապված բողոքներ քննող անձը՝ ի դեմս Գրիգոր Ներսիսյանի,

Մասնակցությամբ՝ «Լաճ Գրուպ» ՍՊԸ-ի տնօրեն՝

Տ. Լաճիկյանի (իրավաբանական անձի պետական գրանցման վկայական 03Ա052775)

ՀՀ Կոտայքի մարզի Բյուրեղավանի համայնքապետարանի ներկայացուցիչներ՝

Վ. Հայրապետյանի (լիազորագիր, տրված՝ 18.07.2019թ.)

Վ. Մարտիրոսյանին (լիազորագիր, տրված՝ 18.07.2019թ.)

ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 11.07.2019թ. թիվ 26/26-1/11636-2019 գրությամբ «Լաճ Գրուպ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը, պարզեցի հետևյալը.

1. <u>ՀՀ ֆինանսների նախարարության ներկայացրած փաստերը և պահանջը.</u>

ՀՀ ֆինանսների նախարարությունը, ՀՀ Կոտայքի մարզի Բյուրեղավանի համայնքապետարանի 26.06.2019թ. թիվ Ե 468/19 և 08.07.2019թ. թիվ Ե 501/19 գրությունների հիման վրա, 11.07.2019թ. թիվ 26/26-1/11636-2019 գրությամբ դիմել է ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին՝ խնդրելով նախաձեռնել «Լաճ Գրուպ»

ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգ:

2. «Լաճ Գրուպ» ՍՊԸ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը.

«Լաճ Գրուպ» ՍՊԸ-ն (հետայսու նաև՝ Ընկերություն) 18.07.2019թ.Գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ուղղված գրությամբ հայտնել է հետևյալը.

ՀՀ ֆինանսների նախարարությունը գրությամբ դիմել է ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին՝ խնդրելով նախաձեռնել «ԼԱՃ ԳՐՈՒՊ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգ:

Ս/թ-ի մայիսի 03-ին համայնքի կողմից հայտարարված ԿՄԲՀ-ԳՀԱՊՁԲ-19/21 ծածկագրով հայտարարված գնման ընթացակարգի արդյունքում համայնքի և «ԼԱՃ ԳՐՈՒՊ» ՍՊԸ-ի միջև կնքվել է Համայնքի կարիքների համար ապրանքի մատակարարման թիվ ԿՄԲՀ-ԳՀԱՊՁԲ-19/1 պայմանագիրը (հետայսու նաև՝ պայմանագիր)՝ համաձայն որի Ընկերությունը պարտավորվել է համայնքին մատակարարել պայմանագրի N 1 հավելվածով նախատեսված ապրանքը, որի տեխնիկական բնութագիրը հետևյալն է.

«Մակնիշը՝ ԶԻԼ MMZ-554M,

Տրանսպորտային միջոցի տեսակը՝ Բեռնատար,

Թափքի տեսակը՝ Ինքնաթափ,

Թողարկման տարեթիվը՝ 1990թ.,

Շարժիչի հզորությունը՝ (ԿՎՏ/Ձ.ՈՒ.),

110/150,

Թույլատրված առավելագույն զանգվածը՝ (կգ)10850,

Զանգվածը առանց բեռնվածության (կգ) 5150 վառելիքը՝ ԳԱԶ,

Գազի բալոնների ծավալը՝ ոչ պակաս (5մ3), փոխանցման տուփը՝ 5 աստիճան, արգելակային համակարգը՝ օդաճնշական, անվադողերի մաշվածությունը՝ ոչ ավել 20%-ից»:

Ընկերությունը հայտնել է, որ ինչպես երևում է համայնքը ցանկացել է ձեռք բերել 1990 թվականի արտադրության ավտոմեքենա՝ հաշվի առնելով դրա բնական մաշվածությունը:

Ընկերությունը ս/թ մայիսի 27-ին համայնքին մատակարարել է ԶԻԼ ՄՄԶ-554Մ մակնիշի ավտոմեքենա, որի թափքը, հանգույցները, շարժիչը և բոլոր մյուս մասերը թարմացված են եղել, անվադողերից չորսը լրիվ նոր են եղել, երկուսը՝ շատ քիչ մաշվածություն են ունեցել, ինչի մասին կարող են փաստել նաև համայնքի ներկայացուցիչները, այնուամենայնիվ, համայնքի կողմից հնչեցվեցին պահանջներ՝ կատարելու որոշակի բարելավումներ, մասնավորապես փոխել ընթացքի գցելու փականը, տեղադրել նոր մարտկոց, որը, սակայն, տեխնիկական բնութագրում նշված չի եղել, և նմանատիպ այլ պահանջներ, որոնց Ընկերությունը համաձայնել է, կատարել է բոլոր ներկայացված պահանջները և կրկին մատակարարել է ավտոմեքենան հունիսի 18-ին: Նույն օրը համայնքի կողմից կրկին պահանջ է ներկայացվել նորով փոխարինել մատակարարված ավտոմեքենայի որոշակի հանգույցներ՝ պատճառաբանելով, որ հետագայում խնդիրներ չառաջանան: Ընկերությունը, հաշվի առնելով այն հանգամանքը, որ պայմանագրով ստանձնել է ապրանքի երաշխիքային սպասարկումը՝ պատրաստակամություն է հայտնել փոխարինել նաև այդ հանգույցները: Աշխատանքների ավարտից հետո Ընկերությունը կրկին մեքենան վերադարձրել է համայնքին հունիսի 21-ին:

Ընկերությունը հայտնել է, որ ցանկանում է բողոքները քննող անձի ուշադրությունը հրավիրել այն հանգամանքի վրա, որ պայմանագրի 5.2-րդ կետով սահմանված է.

«Եթե մատակարարված ապրանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Գնորդը պայմանագրի 5.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 3 աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Վաճառողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը»:

Իսկ պայմանագրի 5. 4-րդ կետը սահմանում է.

«Եթե պայմանագրի 5.2 կետով սահմանված ժամկետում Գնորդը չի ընդունում մատակարարված ապրանքը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատակարարված ապրանքը համարվում է ընդունված, և պայմանագրի 5.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Գնորդը էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Վաճառողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:»:

Վերը նշված իրավանորմերի վերլուծությունից հետևում է, որ համայնքը բացասական եզրակացությունը պետք է ներկայացներ մինչև 2019 թվականի հունիսի 21-ը, հակառակ դեպքում մատակարարված ապրանքը պայմանագրի 5.4-րդ կետի ուժով համարվել է ընդունված, քանի որ հանձնման-ընդունման ակտը ստորագրված է եղել հունիսի 18-ին: Այնինչ, համայնքի կողմից բացասական եզրակացությունը ներկայացվել է հունիսի 24-ին: Ելնելով վերոգրյալից՝ կարող ենք փաստել, որ 2019 թվականի հունիսի 24-ի դրությամբ Ընկերության կողմից մատակարարված ավտոմեքնան ընդունված է եղել համայնքի կողմից, քանի որ վերջինս պայմանագրով սահմանված ժամկետում բացասական եզրակացություն չի ներկայացրել, ուստի համայնքի ղեկավարի 2019 թվականի հունիսի 26-ի թիվ Ե 468/19 գրությամբ պայմանագրի 2.1.7.1 կետի «ա» ենթակետին կատարված հղումը իրավաչափ և կիրառելի չէ սույն պարագայում: Եթե, ըստ համայնքի, մատակարարված ավտոմեքենան ուներ անսարքություններ ապա, վերջինս պետք է հղում կատարեր պայմանագրի 4.2-րդ կետին և պահանջեր Ընկերությունից իրականացնել դրա երաշխիքային սպասարկումը:

Ընկերությունը հայտնել է, որ հարկ է համարում նաև անդրադառնալ գնման հայտը նախագծած ներկայացուցչի կողմից կազմված եզրակացության մեջ մատնանշված թերություններին և այդ փաստաթղթի իրավաչափության հարցին: Եվ այսպես.

ՀՀ կառավարության 2017թ.-ի հունիսի 1-ի թիվ 526-Ն որոշման 1-ին կետի 1-ին ենթակետով հաստատված կարգի 13-րդ կետը սահմանում է.

«Պատասխանատու ստորաբաժանման լիազորությունները չեն կարող վերապահվել գնումները համակարգողին: Պատասխանատու ստորաբաժանման՝ գնման հայտի նախագծմանը մասնակցող անձը (անձինք) պետք է ունենա (ունենան) գնման առարկան բնութագրելու մասնագիտական կարողություն, ինչը որոշվում է՝ ելնելով գնման առարկայի տեսակից»:

Տվյալ պարագայում Ընկերության մոտ առկա է հիմնավոր կասկած, որ հայտը նախագծած ներկայացուցիչը չունի համապատասխան գիտելիքներ՝ գնման առարկան բնութագրելու և, առավել ևս, դրա վերաբերյալ բացասական կամ դրական եզրակացություն տալու համար: Ուստի, միջնորդում ենք համայնքից պահանջել փաստաթղթեր, որոնք կփաստեն, որ գնման հայտը նախագծած ներկայացուցիչը ունի համապատասխան մասնագիտական կարողություն՝ գնման առարկան բնութագրելու և մատակարարված ապրանքի վերաբերյալ եզրակացություն տալու համար.

Եզրակացության «նշումներ անհամապատասխանության մասին» բաժնում գնման հայտը նախագծած ներկայացուցիչը նշել է.

ա) «ինքնաթափ մեխանիզմը չի աշխատում դատարկ թափքի դեպքում շատ ուժեղ խփոցով է բարձրանում, կարճ է 4 հատ 5 հատի փոխարեն»:

Այս պարագայում իրարամերժ են «չի աշխատում» և «դատարկ թափքի դեպքում շատ ուժեղ խփոցով է բարձրանում» եզրույթները. եթե բարձրանում է, նշանակում է աշխատում է: Բացի այդ, անհրաժեշտ է հաշվի առնել, որ ավտոմեքենան օգտագործված է և գործարանային վիճակում չի կարող գտնվել, տվյալ պարագայում պետք է հասկանալ՝ այն իրականացնում է իր գործառույթը, թե՝ ոչ: Պարզ է, որ եթե բարձրանում է, հետևաբար ինքնաթափ մեխանիզմը աշխատում է: Ինչ վերաբերում է այն պնդմանը, որ մեխանիզմը կարճ է՝ 4 աստիճան է 5-ի փոխարեն, ապա Ընկերությունը հայտնել է, որ ԶԻԼ ՄՄԶ554 ավտոմեքենայի ինքնաթափ մեխանիզմը 4 աստիճան է, ինչը փաստվում է համացանցում առկա ռեսուրսների տվյալներով /կցվում է https://specmahina.ru/zil/mmz-554.html/: Ընկերությունը նշել է, որ ակնհայտ է, որ հայտը նախագծած ներկայացուցիչը գաղափար չունի մատակարարված ապրանքի տեխնիկական հատկանիշների վերաբերյալ.

բ) «բեռնատարի կամրջակից ձայներ են գալիս նորմալ չի աշխատում, քաշի հետ ունի խնդիրներ:

Ռուլավոյ կալոնկեն խնդիրներ ունի ղեկը լավ չի աշխատում»:

Անհասկանալի է՝ ինչպես է հայտը նախագծած ներկայացուցիչը եկել նման եզրահանգումների, ինչ է նշանակում «ձայն է գալիս»: Բնական է, որ ձայն է գալու աշխատող ավտոմեքենայից, բայց դա չի նշանակում, որ կամրջակը չի աշխատում. ցանկացած մասնագետ կարող է փաստել, որ կամրջակը կամ ղեկային համակարգը չաշխատելու դեպքում հնարավոր չէ շահագործել ավտոմեքենան: Ընկերությունը գտնում է, որ նման թերությունները կարող են վեր հանվել միայն ավտոմեքենայի տեխնիկական ստուգումից հետո, ինչը համայնքի կողմից չի կատարվել, և այս ամենը ընդամենը նրանց սուբյեկտիվ կարծիքն է: Ընկերությունը գտնում է, որ այդ ձևակերպումը որևէ իրավական հիմնավորում չունի և ընդունելի չէ.

գ) «Ցուցիչները չեն աշխատում»:

Ընկերությունը հայտնել է, որ հանձնելու պահին բոլոր ցուցիչները աշխատել են, եթե ցուցիչները չաշխատեին և համայնքը այդ մասին Ընկերությանը նախազգուշացրած լիներ,

ինչպես կարող է հաջորդ հանձնման ժամանակ այդ թերությունը առկա լիներ, դա չի բխում ընկերության շահերից.

«Դռների ռեզինները բացակայում են»:

Ընկերությունը հայտնել է, որ վերը նշված դիտարկումը զավեշտ է առաջացնում Համայնքը գնում է 1990 թվականի արտադրության ԶԻԼ ավտոմեքենա և ցանկանում է, որ դրանում առկա լինեն գործարանային ռեզիններ: Նման պահանջ երբևէ մինչ այդ համայնքի կողմից չի ներկայացվել.

դ) «Հիդրավլիկի յուղը լավը չէ: Անտիֆրիզ չկա»

Ընկերությունը հայտնել է, որ վերը նշված դիտարկումները որևէ հիմնավորում չունեն: Պայմանագրի տեխնիկական բնութագրում չկա նշում, հիդրավլիկ համակարգի յուղի որակի մասին, ինչպես նաև պահանջ, որ հովացման համակարգում պետք է ջրի փոխարեն անտիֆրիզ լցված լինի:

ե) «Ռեսորների ուշկեքը 2 կողմից չկա»

Առհասարակ, այս ձևակերպումը և նման պնդումը կրկին անգամ հուշում է, որ այս եզրակացությունը գրող անձն ընդհանրապես գաղափար չունի ԶԻԼ մակնիշի կամ, առհասարակ, որևէ ավտոմեքենայի կառուցվածքի մասին: Այսպես կոչված «ռեսորների ուշկեք» արտահայտությունը, կարծում ենք, վերաբերում է ռեսորների և ավտոմեքենայի շրջանակի ամրակցման հանգույցին, որի բացակայության դեպքում ավտոմեքենայի շրջանակը պարզապես կընկնի կամրջակի վրա: Հետևաբար, մատակարարված ավտոմեքենայում չէին կարող բացակայել դրանք.

զ) «փոխանցման տուփից ձայն»:

Ընկերությունը հայտնել է, որ նույն դիրքորոշումն ունի, ինչ սույն կետի «բ» ենթակետում:

Ընկերությունը նշել է, որ նույնիսկ եթե թեորիապես պատկերացնենք, որ այս բոլոր թերություններն առկա էին, միևնույն է, դրանք չեն խոչընդոտել մատակարարված ապրանքի շահագործմանը և չէին կարող հիմք հանդիսանալ պայմանագրի լուծման համար: Մի՞թե դրանք չէին կարող վերացվել համայնքի համար ընդունելի ժամկետում, ինչպես իր գրության մեջ նշել է համայնքի ղեկավարը, ո՞րն է այն հիմնավորումը, որը փաստում է, որ այս թերությունները հնարավոր չէր վերացնել համայնքի համար ընդունելի ժամկետում:

Վերոգրյալից կարելի է փաստել, որ համայնքը դրսևորել է ակնհայտ սուբյեկտիվ և բազմաթիվ հարցեր առաջացնող գործելաոճ՝ անհիմն լուծելով պայմանագիրը և չընդունելով մատակարարված ապրանքը:

Ելնելով վերոգրյալից՝ Ընկերությունը խնդրել է «ԼԱՃ ԳՐՈՒՊ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված պաշտոնական ընթացակարգը մերժել:

Ի լրումն վերոհիշյալ գրության Ընկերությունը 30.07.2019թ. գրությամբ հայտնել է հետևյալը.

ՍՑ-ՆԳ-2019/119 ընթացակարգի շրջանակներում ներկայացվում է «Լաճ Գրուպ» ՍՊԸ-ի դիրքորոշումը «ՎԱՐՄՕՆ ՌԻԵԼԹԻ» ՍՊԸ-ի կողմից տրամադրված հաշվետվության վերաբերյալ.

Ընկերությունը մատնանշել է, որ «ՎԱՐՄՕՆ ՌԻԵԼԹԻ» ՍՊԸ-ն ըստ «Սփյուռ» տեղեկատվական համակարգի հանդիսանում է անշարժ գույքի գործակալություն /https://www.spyur.am/am/companies/varmon-realty/29175/ և լիցենզավորված է իրականացնելու միայն անշարժ գույքի գնահատում, ինչը փաստվում է ՀՀ անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի 2008 թվականի նոյեմբերի 4-ի թիվ 08-349-Լ հրամանով, սակայն վերջինս, վերազանցելով իր իրավունքները, փաստացի տվել է ԶԻԼ ՄՄԶ-554Մ մակնիշի բեռնատար ավտոմեքենայի առկա տեխնիկական վիճակի մասին գնահատական, ինչպես նշված է հաշվետվության՝ «հետազոտման նպատակը» կետում՝ սույնով փաստացի տրամադրելով կեղծ տվյալներ: Կեղծիքի մասին է վկայում նաև այն հանգամանքը, որ հաշվետվության տիտղոսաթերթում նշված է. «ԳՆԱՀԱՏՎՈՂ ՕԲՅԵԿՏԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ՝ «ԶԻԼ ՄՄԶ-554Մ» մակնիշի բեռնատար ավտոմեքենա»:

Փաստացի «ՎԱՐՄՕՆ ՌԻԵԼԹԻ» ՍՊԸ-ն գնահատման շղարշի տակ ներկայացնում է իր հետազոտությունը իբր ավտոմեքենայի տեխնիկական վիճակի մասին, այնինչ վերջինս նման իրավասություն չունի:

Հետազոտության «Բովանդակություն» բաժնում նշված է, որ հետազոտության 5-րդ էջում պետք է նշված լինեն օգտագործված ինֆորմացիոն աղբյուրները և գրականությունը, այնինչ հաշվետվության 5-րդ էջում որևէ նման աղբյուր մատնանշված չէ: Փաստացի փորձագետը որևէ իրավական հիմնավորում իր փորձաքննության հիմքում չունի. նա փորձաքննությունն իրականացրել է՝ ըստ իր ներքին համոզմունքի:

Հետազոտության «Հետազոտության կատարման հիմքերը» կետում «ՎԱՐՄՕՆ ՌԻԵԼԹԻ» ՍՊԸ-ն նշել է, որ հետազոտման համար հիմք է հանդիսացել Բյուրեղավան համայնքի ղեկավար պարոն՝ Հ. Բալասանյանի գրությունը: Հարց է ծագում՝ արդյո՞ք գրությունը հիմք կարող է հանդիսանալ նման հետազոտության համար: Փաստորեն, վերջինս փաստում է, որ հետազոտությունն իրականացրել է առանց պատվիրատուի հետ իրավապայմանագրային հարաբերություններ ունենալու, ինչը առնվազն զարմանքի է արժանի:

Հետազոտության «հետազոտվող օբյեկտի իրավական փաստաթղթերի փաթեթը» բաժնում նշված է, որ ավտոմեքենային վերաբերող փաստաթղթեր չեն տրամադրվել: Ակնհայտ է, որ չեն տրամադրվել, չէ՞ որ համայնքապետարանը հրաժարվել է գրանցել և ընդունել ավտոմեքենան, ինչպե՞ս կարող էր նա փաստաթուղթ ունենալ ավտոմեքենայի համար:

Հետազոտության մեջ իսպառ բացակայում են հետազոտության համար կիրառված մեթոդները, ելակետային տվյալները և դրանց շեղումները, որպես օրինակ մատնանշենք հետևյալը՝ հետազոտության «Հետազոտվող օբյեկտի համառոտ նկարագրությունը» բաժնում նշված է.

«Հետազոտությանը տրամադրված, ԶԻԼ ՄՄԶ-554Մ մակնիշի բեռնատար ավտոմեքենայի ակնադիտական զննության արդյունքում պարզվեց՝

ե/ ղեկանիվի ազատ ընթացքը /լյուֆտը/ սահմանված նորմը գերազանցում է կրկնակի անգամ»:

Ինչպես է հնարավոր ղեկանիվի ազատ ընթացքը որոշել ակնադիտական զննության, այսինքն՝ միայն դիտելու միջոցով, առանց որևէ չափումներ իրականացնելու: Ակնհայտ է, որ առկա է, եթե ոչ կեղծիք, ապա գոնե ոչ մասնագիտական մոտեցում: Գտնում ենք, որ փորձագետի կողմից իրականացված ակնադիտական հետազոտության արդյունքում ի հայտ բերված մնացած տեխնիկական խնդիրներին արդեն հասկանալի պատճառով անդրադառնալն անիմաստ է:

Հատուկ ուշադրության է արժանի այն հանգամանքը, որ համաձայն ՀՀ արդարադատության նախարարության փորձագիտական կենտրոնի կողմից տրամադրված թիվ ՀՄ. 77-97 վկայականի՝ Օնիկ Անուշավանի Գևորգյանին շնորհվել է դատական փորձագետի որակավորում՝ «Ապրանքագիտական հետազոտություն» մասնագիտությամբ: Այնինչ՝ ապրանքագետը որևէ կերպ չի կարող տրամադրել

եզրակացություն՝ ավտոմեքենայի տեխնիկական վիճակի մասին. դրա համար անհրաժեշտ են տեխնիկական գիտելիքներ, մինչդեռ ապրանքագետը տիրապետում է տնտեսագիտական գիտելիքների և կարող է գնահատել միայն ապրանքի գինը: Ակնհայտ է, որ փորձագետը ևս վերազանցել է իր լիազորությունները և տվել է եզրակացություն, որի իրավասությունը չուներ:

Ամփոփելով վերոգրյալը, Ընկերությունը գտնում է, որ Բյուրեղավանի համայնքապետարանի կողմից ներկայացված հաշվետվությունը իրավաչափ չէ. պարունակում է, եթե ոչ կեղծ, ապա չհիմնավորված ոչ մասնագիտական տեղեկություններ և չի կարող հիմք հանդիսանալ՝ «Լաճ գրուպ» ՍՊԸ-ի կողմից մատակարարված ավտոմեքենայի ընդունումը մերժելու համար:

«Լաճ գրուպ» ՍՊԸ-ն, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ՆԳ-2019/119 ընթացակարգի շրջանակներում 19.07.2019թ. ժամը 10:30-ին հրավիրված նիստի վերաբերյալ, տնօրենը ապահովել է իր մասնակցությունը, ով պնդել է վերոհիշյալ գրություններով ներկայացված դիրքորոշումը:

3. <u>ՀՀ Կոտայքի մարզի Բյուրեղավանի համայնքապետարանի կողմից ներկայացված փաստարկները և դիրքորոշումը.</u>

ՀՀ Կոտայքի մարզի Բյուրեղավանի համայնքապետարանը ՀՀ ֆինանսների նախարարությանն ուղղված 26.06.2019թ. թիվ Ե 468/19 և 08.07.2019թ. թիվ Ե 501/19 գրություններով ներկայացրել է «Լաճ գրուպ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու հիմքերը և հայտնել է հետևյալը.

ՀՀ Կոտայքի մարզի Բյուրեղավանի համայնքապետարանի և «Լաճ Գրուպ ՍՊԸ-ի միջև 2019 թվականի մայիսի 03-ին կնքվել է ԿՄԲՀ-ԳՀԱՊՁԲ-19/21 գնման պայմանագիրը, որի համաձայն Ընկերությունը պայմանագիր կնքելու օրվանից 21 օրյա ժամկետում պետք է մատակարարեր ZIL MMZ-554M մակնիշի ինքնաթափ բեռնատար (հետայսու նաև՝ Ապրանք):

Համաձայն Պայմանագրի 2.1.1 կետի՝ Գնորդն իրավունք ունի ապրանքը պայմանագրով սահմանված ժամկետում Վաճառողի կողմից չմատակարարելու դեպքում հրաժարվել ապրանքից, եթե մատակարարման ժամկետը խախտվել է 30 օրից

ավելի: Վաճառողը 2019թվականի մայիսի 27-ին առաջին անգամ ներկայացրել է Ապրանքը, որի զննության արդյունքում հայտնաբերվել են որոշակի անսարքություններ: Այդ մասին բանավոր տեղեկացվել է Վաճառողին և նա համաձայնվել է շտկել հայտնաբերված անսարքությունները: Ապրանքը 2-րդ անգամ ներկայացվել է 2019 թվականի հունիսի 18-ին: Այդ ժամանակ ևս հայտնաբերվել են անսարքություններ, որոնք Վաճառողը համաձայնվել է վերացնել: Ապրանքը 3-րդ անգամ ներկայացվել է 2019 թվականի հունիսի 21-ին: Այդ ժամանակ ևս հայտնաբերվել են մի շարք անսարքություններ:

Ելնելով Պայմանագրի 2.1.7.1 կետի «ա» ենթակետից, այն է՝ Վաճառողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե մատակարարվել է անպատշաճ որակի ապրանք, որը չի կարող փոխարինվել գնորդի համար ընդունելի ժամկետում, Բյուրեղավանի համայնքապետարանը 2019 թվականի հունիսի 25-ին միակողմանի լուծել է ԿՄԲՀ-ԳՀԱՊՁԲ-19/21 պայմանագիրը:

ՀՀ Կոտայքի մարզի Բյուրեղավանի համայնքապետարանը ՍՑ-ՆԳ-2019/119 ընթացակարգի շրջանակներում Գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ուղղված գրությամբ հայտնել է հետևյալը.

ՀՀ Կոտայքի մարզի Բյուրեղավանի համայնքապետարանի և «Լաճ Գրուպ ՍՊԸ-ի միջև 2019 թվականի մայիսի 03-ին կնքվել է N ԿՄԲՀ-ԳՀԱՊՁԲ-19/21 գնման պայմանագիրը, համաձայն որի՝ Ընկերությունը պայմանագիր կնքելու օրվանից 21 օրյա ժամկետում պետք է մատակարարեր ZIL MMZ-554M մակնիշի ինքնաթափ բեռնատար (այսուհետ՝ Ապրանք):

Վաճառողն արդեն իսկ ուշացումով 2019 թվականի մայիսի 27-ին առաջին անգամ ներկայացրել է Ապրանքը, որի արտաքին զննության արդյունքում հայտնաբերվել են լուրջ տեխնիկական անսարքություններ, մասնավորապես՝ շարժիչի խցիկից յուղի արտահոսք կար, մարտկոցը հին էր, ընթացաշարժիչը չէր աշխատում, շարժիչի պարապ ընթացքը նորմալ չէր աշխատում, առկա էր գազի արտահոսք, այդ պատճառով համայնքապետարանի պատասխանատու ստորաբաժանումը չի շարունակել ուսումնասիրությունը: Այդ մասին բանավոր տեղեկացվել է վաճառողին և նա համաձայնվել է շտկել հայտնաբերված անսարքությունները: Ապրանքը 2-րդ անգամ ներկայացվել է 2019 թվականի հունիսի 18-ին: Վաճառողի ներկայացուցիչը ներկայացրել է հանձնման-ընդունման ակտ, որը պատասխանատու ստորաբաժանման կողմից չի

ստորագրվել, քանի որ վերոնշված թերությունները մասնակի էին շտկվել: Շարժիչի խցիկից կրկին կար յուղի արտահոսք, բացի այդ հայտնաբերվեց նաև, որ ընթացքի ժամանակ փոխանցման տուփի 3-րդ աստիճանը չի աշխատում, ղեկանիվի հիդրոուժեղացուցիչը չի աշխատում՝ ղեկը շատ դժվարությամբ էր պտտվում, աղմուկ էր լսվում հետին կամրջակից, հովացման համակարգում անտիֆրիզի փոխարեն ջուր էր լցված: Վաճառողի ներկայացուցիչին առաջարկվել է ջուրը փոխարինել անտիֆրիզով, քանի որ այն կարող էր բացահայտել հովացման համակարգում եղած հնարավոր թերությունները (անտիֆրիզը ավտոմեքենաների հովացման համակարգի նյութ է համարվում): Վաճառողը կրկին համաձայնվել է վերացնել անսարքությունները: Ապրանքը 3-րդ անգամ ներկայացվել է 2019 թվականի հունիսի 21-ին ու նոր անսարքություն է հայտնաբերվել՝ կապված թափքի բարձրացման մեխանիզմի հետ: Թափքը ուժգին խփոցով էր բարձրանում և մինչև վերջ չէր բարձրանում: Այդ ժամանակ վաճառողի ներկայացուցիչը առաջարկել է մեքենան թողնել մեզ մոտ զննության՝ ներկայացնելով հանձնման-ընդունման ակտ, մենք տեղեկացրել ենք նրան, որ դա կապ չունի գնումների գործընթացի փաստաթղթերի հետ, ակտի ամսաթիվը սխալ է, գրված է հետին թվով: Չնայած այդ ամենին՝ ակտը ստորագրվել է մեր կողմից՝ մեքենան մեզ մոտ մնալու փաստը հավաստելու նպատակով:

Վաճառողի կողմից մեքենան ներկայացվել է առանց տեխնիկական անձնագրի և առանց պետական համարանիշի:

Պատվիրատուն հայտնել է, որ մեքենայի տեխնիկական վիճակի վերաբերյալ որպեսզի Պատվիրատուն ունենար ավելի հստակ նկարագիր՝ հրավիրել է անկախ փորձագետ, ով իր եզրակացությամբ ներկայացրել է առկա անսարքությունները (փորձագետի եզրակացությունը ներկայացվել է փաթեթում):

Ելնելով Պայմանագրի 2.1.7.1 կետի «ա» ենթակետից, այն է՝ Վաճառողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե մատակարարվել է անպատշաճ որակի ապրանք, որը չի կարող փոխարինվել գնորդի համար ընդունելի ժամկետում, Բյուրեղավանի համայնքապետարանը 2019 թվականի հունիսի 25-ին միակողմանի լուծել է ԿՄԲՀ-ԳՀԱՊՁԲ-19/21 պայմանագիրը, որը հրապարակվել է gnumner.am կայքում:

Պատվիրատուն հայտնել է, որ Վաճառողի ներկայացուցիչը գնումների գործնթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով

նախաձեռնված ընթացակարգով 2019 թվականի հուլիսի 19-ին, ժամը 12:00-ին հրավիրված նիստի ժամանակ ակնհայտ սխալ տեղեկատվություն է ներկայացրել մեքենայի հանձնման և ընդունման ամսաթվի վերաբերյալ՝ այդ փաստը օգտագործելով ի շահ իրեն:

Պատվիրատուն առաջարկել է ելնելով նշված փաստերից, «Գնումների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետի համաձայն՝ «Լաճ Գրուպ» ՍՊԸ-ին ներառել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:

Պատվիրատուն լրացուցիչ նշել է, որ «Լաճ Գրուպ» ՍՊԸ-ի ոչ բարեխիղճ գործունեության արդյունքում Բյուրեղավան համայնքը բավականին տուժել է, քանի որ այդ մեքենան անհրաժեշտ է եղել համայնքում աղբահանության և համայնքային այլ աշխատանքների կատարման համար:

Պատվիրատուն, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ՆԳ-2019/119 ընթացակարգի շրջանակներում 19.07.2019թ. ժամը 10:30-ին հրավիրված նիստի վերաբերյալ, ապահովել է իր ներկայացուցիչների մասնակցությունը, ովքեր պնդել են վերոհիշյալ գրություններով ներկայացված դիրքորոշումը:

4. <u>ՍՑ-ՆԳ-2019/119 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.</u>

ՍՑ-ՆԳ-2019/119 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը.

1. Բյուրեղավանի համայնքապետարանի և «Լաճ Գրուպ ՍՊԸ-ի միջև 03.05.2019թ. կնքվել է N ԿՄԲՀ-ԳՀԱՊՁԲ-19/21 ապրանքի մատակարարման պայմանագիր, որի 1-ին կետի 1.1 ենթակետի համաձայն՝ «Լաճ Գրուպ ՍՊԸ-ն պարտավորվել է սույն պայմանագրով սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում ժամկետներում և հասցեով Գնորդին մատակարարել պայմանագրի N 1 հավելվածով՝ Տեխնիկական բնութագիր-գնման-ժամանակացուցով նախատեսված ապրանքը, իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել ապրանքը և վճարել դրա համար:

2. «Լաճ Գրուպ ՍՊԸ-ին ուղղված 25.06.2019թ. թիվ Ե 460/19 գրությամբ Բյուրեղավանի համայնքապետարանը հայտնել է, որ հիմք ընդունելով Պայմանագրի 2.1.7 կետի պահանջը 25.06.2019թ. միակողմանի լուծում է Պայմանագիրը:

5. ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ՝ Գրիգոր Ներսիսյանս, ուսումնասիրելով ՀՀ ֆինանսների նախարարության 11.07.2019թ. թիվ 26/26-1/11636-2019 գրությունը, Բյուրեղավանի համայնքապետարանի 2126.06.2019թ. թիվ Ե468/19 և 08.07.2019թ. թիվ Ե501/19 գրությունները և կից փաստաթղթերը, գործով առկա փաստաթղթերը, հայտնում եմ հետևյալը.

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 345-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ պարտավորության ուժով մի անձը (պարտապանը) պարտավոր է մեկ այլ անձի (պարտատիրոջ) օգտին կատարել որոշակի գործողություն. այն է՝ վճարել դրամ, հանձնել գույք, կատարել աշխատանք, մատուցել ծառայություն և այլն, կամ ձեռնպահ մնալ որոշակի գործողություն կատարելուց, իսկ պարտատերն իրավունք ունի պարտապանից պահանջել կատարելու իր պարտականությունը:

Նույն օրենսգրքի 408-րդ հոդվածի համաձայն՝ պարտավորության խախտում է համարվում այն չկատարելը կամ անպատշաճ (կետանցով, ապրանքների, աշխատանքների և ծառայությունների թերություններով կամ պարտավորության բովանդակությամբ որոշվող այլ պայմանների խախտմամբ) կատարելը:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ բացառությամբ նույն օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին, 3-րդ, 4-րդ և 5-րդ կետերով նախատեսված ընթացակարգով գնում կատարելու դեպքերի, գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք, որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ներառված են գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե ՝

ա. խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը,

բ. որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց,

գ.հայտերը բացելուց հետո հրաժարվել է գնման գործընթացին հետագա մասնակցությունից:

Օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանում է, որ գնումների գործընթացին մասնակցելու իրավունքից զրկված մասնակցի վերաբերյալ ունեցած տեղեկությունների հիման վրա լիազորված մարմինը ընթացակարգ է նախաձեռնում գնումների հետ կապված բողոքներ քննող մարմնում՝ առանց վճարի: Տվյալ մասնակցի կարծիքը լսելուց հետո գնումների հետ կապված բողոքներ քննող անձը սույն օրենքի 50-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված ժամկետում որոշում է կայացնում մասնակցին սույն հոդվածով նախատեսված ցուցակում ընդգրկելու վերաբերյալ: Անձը նշված ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

Բյուրեղավանի համայնքապետարանի և «Լաճ Գրուպ» ՍՊԸ-ի միջև 03.05.2019թ. կնքվել է N ԿՄԲՀ-ԳՀԱՊՁԲ-19/21 ապրանքի մատակարարման պայմանագիր, որի 1-ին կետի 1.1 ենթակետի համաձայն՝ «Լաճ Գրուպ» ՍՊԸ-ն պարտավորվել է սույն պայմանագրով սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով Գնորդին մատակարարել պայմանագրի N 1 հավելվածով՝ Տեխնիկական բնութագիր-գնման-ժամանակացուցով նախատեսված ապրանքը (այսուհետ՝ ապրանք), իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել ապրանքը և վճարել դրա համար:

Պայմանագրի թիվ 1 հավելված տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի համաձայն՝ «Լաճ Գրուպ» ՍՊԸ-ն պարտավորվել է Պայմանագրի կնքման օրվանից 21 օրյա ընթացքում Պատվիրատուին մատակարարել ԶԻԼ ՄՄԶ-554Մ մակնիշի ինքնաթափ բեռնատար ավտոմեքենա:

Այսպիսով՝ համաձայն Պատվիրատուի ներկայացված դիրքորոշման և գործում առկա նյութերի Վաճառողը 27.05.2019թ. առաջին անգամ ներկայացրել է Ապրանքը, որի արտաքին զննության արդյունքում հայտնաբերվել են լուրջ թերություններ, այդ պատճառով համայնքապետարանի պատասխանատու ստորաբաժանումը չի շարունակել ուսումնասիրությունը, թերությունների մասին բանավոր տեղեկացրել է Վաճառողին, վերջինս էլ համաձայնվել է շտկել հայտնաբերված թերությունները: Ապրանքը 2-րդ անգամ ներկայացվել է 18.06.2019թ., Վաճառողի կողմից կից ներկայացնելով հանձնման-ընդունման արձանագրությունները և պայմանագրի արդյունքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ ակտը, արձանագրությունները պատասխանատու ստորաբաժանման կողմից չեն ստորագրվել, քանի որ վերոնշված թերությունները

մասնակի էին շտկվել, կրկին բանավոր կարգով Վաճառողը տեղեկացվել է թերությունների մասին՝ համաձայնվելով շտկել դրանք: Ապրանքը 3-րդ անգամ ներկայացվել է 21.06.2019թ., և Վաճառողի կողմից առաջարկվել է մեքենան թողնել Պատվիրատուի մոտ զննության՝ ներկայացնելով հանձնման-ընդունման արձանագրությունները:

Պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքների վերաբերյալ Բյուրեղավանի համայնքապետարանի կողմից 24.06.2019թ. տրվել է բացասական եզրակացություն՝ մանրամասն նշումներ կատարելով անհամապատասխանության վերաբերյալ:

Բյուրեղավանի համայնքապետարանը, ղեկավարվելով Պայմանագրի 2.1.7.1 կետի «ա» ենթակետով, այն է՝ Վաճառողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե մատակարարվել է անպատշաճ որակի ապրանք, որը չի կարող փոխարինվել գնորդի համար ընդունելի ժամկետում, 2019 թվականի հունիսի 25-ին միակողմանի լուծել է ԿՄԲՀ-ԳՀԱՊՁԲ-19/21 պայմանագիրը:

Համաձայն Պատվիրատուի ներկայացրած դիրքորոշման մեքենայի տեխնիկական վիճակի վերաբերյալ ավելի հստակ նկարագիր ունենալու նպատակով Պատվիրատուի կողմից ներգրավվել է «ՎԱՐՄՕՆ ՌԻԵԼԹԻ» ՍՊԸ-ն, որը 26.06.2019թ. ներկայացրել է «207-02/Վ-019» հաշվետվությունը՝ ԶԻԼ ՄՄԶ-554Մ մակնիշի բեռնատար ավտոմեքենայի /Պայմանագրի առարկայի/ վերաբերյալ:

Այսպես՝ Պայմանագրի 2-րդ կետի 2.1.2, 2.1.7.1 ա) և 2.1.8 ենթակետերի համաձայն՝ Գնորդն իրավունք ունի՝

2.1.2 Եթե հանձնվել է անպատշաճ որակի՝ պայմանագրով նախատեսված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանք՝

ա) պահանջել հատուցելու ապրանքի անպատշաճ որակի լինելու պատճառով իր կատարած ծախսերը.

բ) չընդունել ապրանքն՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ապրանքը պայմանագրին համապատասխանող որակի ապրանքով անհապույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու պայմանագրի 6.3 կետով նախատեսված տուգանքը.

2.1.7.1 Վաճառողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատակարարվել է անպատշաճ որակի ապրանք որը չի կարող փոխարինվել Գնորդի համար ընդունելի ժամկետում.

2.1.8 Զննել ապրանքը և հայտնաբերված թերությունների մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին:

Պայմանագրի 2-րդ կետի 2.2.4 ենթակետի համաձայն՝ Գնորդը պարտավոր է՝

2.2.4 Ապրանքի քանակի, տեսականու, որակի մասին պայմանագրի պայմանները խախտելու մասին Վաճառողին ծանուցել թերությունը հայտնաբերելուց հետո անմիջապես կամ այն բանից հետո՝ ողջամիտ ժամկետում, երբ պայմանագրի համապատասխան պայմանի խախտումը պետք է հայտնաբերված լիներ՝ ելնելով ապրանքի բնույթից և նշանակությունից:

Պայմանագրի 5-րդ կետի 5.2 և 5.3 ենթակետերի համաձայն՝

5.2 Եթե մատակարարված ապրանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Գնորդը պայմանագրի 5.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված ***3 աշխատանքային օրվա ընթացքում*** ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Վաճառողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

5.3 Եթե մատակարարված ապրանքը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Գնորդը չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 5.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Վաճառողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Գնորդը ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Վաճառողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

Այսպիսով՝ ուսումնասիրելով Պայմանագրի վերոնշյալ դրույթները և Պայմանագրի լուծման համար հիմք հանդիսացած Պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքների վերաբերյալ Բյուրեղավանի համայնքապետարանի կողմից 24.06.2019թ. տրված բացասական եզրակացությունը, արձանագրում եմ, որ Պատվիրատուն Ապրանքի վերաբերյալ 24.06.2019թ. կազմելով բացասական եզրակացություն՝ մանրամասն նկարագրված թերություններով, 25.06.2019թ. լուծել է պայմանագիրը՝ Վաճառողին

պայմանագրով սահմանված կարգով չտրամադրելով ողջամիտ ժամկետ՝ անպատշաճ որակի ապրանքը պայմանագրին համապատասխանող որակի ապրանքով փոխարինելու համար:

Նման պայմաններում գտնում եմ, որ առկա չէ Ընկերության կողմից «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետի խախտման փաստը: Ուստի գտնում եմ, որ «Լաճ Գրուպ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու հիմքեր առկա չեն:

Ինչ վերաբերվում է Պատվիրատուի կողմից հրավիրված անկախ փորձագետի՝ «ՎԱՐՄՕՆ ՌԻԵԼԹԻ» ՍՊԸ-ի 26.06.2019թ. «207-02/Վ-019» հաշվետվությանը, ապա սույն մասով արձանագրում եմ, որ այն տրվել է 26.06.2019թ., մինչդեռ Պատվիրատուն Ընկերությանն ուղղված ծանուցմամբ Պայմանագիրը լուծել է 25.06.2019թ.-ին:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետով՝

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 11.07.2019թ. թիվ 26/26-1/11636-2019 գրությամբ «Լաճ գրուպ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը մերժել:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն իրավապարտադիր է և ուժի մեջ է մտնում տեղեկագրում հրապարակվելու հաջորդ օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

Գնումների հետ կապված բողոքներ քննող անձ՝ **ԳՐԻԳՈՐ ՆԵՐՍԻՍՅԱՆ**